

ՊԱՆԹՅՈՒՐՔԻԶՄԻ ՄԱՐՄԱԶԸ ԵՎ ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՈՒՄԸ

Բանալի բառեր – քաղաքական դիսկուրս, մտաշահարկում, մտաշահարկային տեխնիկա և մարտավարություն, քաղաքական մտաշահարկում, Հայոց ցեղասպանություն

Ներածություն

Մտաշահարկումը (մանիպուլյացիան) լեզվական միջոցների այնպիսի մտածված ու գիտակցված կիրառություն է, որն ուղղված է ունկնդրի կամ ընթերցողի սոցիալական, հոգեկան ու վարքագծային վիճակների վրա ազդելուն և նրա գործողությունները սխալ ուղղորդելուն: Դիտավորությունը մտաշահարկային կարևոր չափանիշ է և, իհարկե, կարող է կործանարար ազդեցություն ունենալ հասարակության վրա: Այս աշխատանքում քննության առնելով ադրբեջանական «Azvision.az» առցանց լրատվամիջոցում հրապարակված «Հայերի՝ այսպես կոչված ցեղասպանությունը» հոդվածը¹ լեզվական ու հոգեբանական տարաբնույթ մտաշահարկային մեխանիզմների կիրառման դիտանկյունից՝ փորձում ենք բացահայտել հեղինակի մտաշահարկային վերաբերմունքի և մտադրությունների բացարձակ անհամատեղելիությունը ճշմարիտ փաստերի հետ: Կայքէջի անանուն հեղինակի՝ թվացյալ համոզիչ փաստարկների ու ապացույցների միջոցով իրականությունը խեղաթյուրելու և իր սուբյեկտիվ տեսակետը որպես ճշմարտություն ներկայացնելու փորձը, մեղմ ասած, հաջողված չէ: Փաստարկման մեթոդների կիրառումն ու էմպիրիկ ապացույցների հղումները, կարծում ենք, օգնում են մեզ բացահայտելու ոչ միայն հեղինակի մտաշահարկային տեխնիկայի և մարտավարության մեխանիզմները, այլև Ադրբեջանի քաղաքական շրջանակների՝ պատմական կեղծարարության և իրականության աղավաղումների միջոցով քաղաքական նպատակներ հետապնդող համառությունը:

¹ Ադրբեջանական «Azvision.az» կայքէջում տեղադրված հոդվածի մեր նախորդ դիտարկումները տե՛ս **Gasparyan S., Hayrapetyan Z.**, Manipulative Tactics Employed by Azerbaijani Authors in Online Media Resources // Cognition, Communication, Discourse, 2020, n° 21, p. 25-35. Doi: <https://doi.org/10.26565/2218-2926-2020-21-02>; webpage: <http://sites.google.com/site/cognitiondiscourse/home>.

Ադրբեջանական «Azvision.az» կայքէջի «Հայերի՝ այսպես կոչված ցեղասպանությունը» հոդվածը

Մտաշահարկումը ընդգրկուն երևույթ է՝ միտված արատավոր նպատակների իրագործմանն ու ճշմարտությունը սքողելուն: Դրա վառ օրինակներից է ադրբեջանական <Azvision.az> կայքէջում հրապարակված հոդվածը, որտեղ ճշմարտության խեղաթուրմամբ, պատմական փաստերը կեղծելու ճանապարհով անհայտ հեղինակը ջանում է աղավաղել թուրքի՝ միլիոնավոր անմեղ հայերի նկատմամբ 1915 թ. իրագործած սահմուկեցուցիչ ոճրագործության իրողությունը: Հայոց ցեղասպանության փաստի շահարկումը հեղինակն սկսում է հոդվածի «Հայերի՝ այսպես կոչված ցեղասպանությունը» վերնագրից՝ փորձելով անհապաղ ապացուցել, թե ինչպես են մինչ այժմ հայերը խաբել ու մոլորության մեջ գցել միջազգային հանրությանը՝ մեղադրելով թուրքերին սարսափելի հանցագործության մեջ: Հոդվածը սկսվում է այն բացահայտ կեղծ տեսակետով, որ հայերը մտադիր էին ոչնչացնել թուրքերին:

When armenian organizations instigated Armenians to revolt during World War I (1914-1918) against the Ottoman Government, their intention was to exterminate the Turks and to create an independent armenian state in eastern Anatolia where armenians were only about 15% of the total population.

Երբ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում (1914-1918) հայկական կազմակերպությունները դրդում էին հայերին ապստամբելու Օսմանյան կառավարության դեմ, նրանց նպատակն էր ոչնչացնել թուրքերին և ստեղծել անկախ հայկական պետություն Արևելյան Անատոլիայում, որտեղ հայերը կազմում էին ընդհանուր բնակչության ընդամենը 15%-ը:

Հոդվածի առաջին իսկ պարբերության մեջ ներկայացված այս պնդումն այն մասին, թե Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական կազմակերպությունների դրդմամբ է, որ հայերը սադրիչ գործողություններ են ձեռնարկել և ընդվզել օսմանյան կառավարության դեմ՝ նպատակադրվելով ոչնչացնել թուրքերին և անկախ պետականություն հիմնել Արևելյան Անատոլիայում, ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը: Ըստ պատմական գրառումների¹ հայերը հազարամյակներ շարունակ ապրում էին իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում², որը, թուրքերի կողմից

¹ Տե՛ս օրինակ՝ **Morgenthau H.**, The Murder of a Nation, New York, 1974, **Զուլայան Մ.**, Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995, **Մելքոնյան Ա. Ա.**, Եղեռնի քաղաքականության ձևավորման ակունքները. XV դարի վերջ – 1915 թվական (Պատմաժողովրդագրական ակնարկ Էրզրումի նահանգի օրինակով) // Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ) / Խմբ. Պ. Հովհաննիսյան, Լ. Խուրշուպյան և այլք, Երևան, 2001, Թուրքերը թուրքերի մասին, կազմ. և խմբ. Ռ. Մելքոնյան, հ. III, Երևան, 2011 և այլն:

² Այս մասին տե՛ս **Капанцян Г. А.**, Хаяса – калыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947, **Lang David M.**, Armenia. Cradle of Civilization, London, 1970, **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и

գրավվելով, վերանվանվել էր Արևելյան Անատոլիա¹: Հայտնի է, որ շատ քաղաքներում և գյուղերում հեղափոխությունից հետո էլ հայ ազգաբնակչությունը թվով գերազանցում էր իր մուսուլման հարևաններին²: Հեղինակն իհարկե նախընտրում է շրջանցել հատկապես դարասկզբին թուրքերի կողմից մշտապես իրականացվող հետապնդումների, ճնշման, նվաստացումների ու արյունահեղ կոտորածների այն բազմաթիվ փաստերը, որոնք վավերացված ու արխիվացված են տարբեր փաստաթղթերում, կենսագրական արձանագրումներում և վերապրածների ու նրանց սերունդների հիշողության ծալքերում: Նրան ամենևին ձեռնտու չէ հիշել նաև, թե ինչպես էին Թուրքիայի կառավարող շրջանակները հնարավոր և անհնար ջանքեր գործադրում հայերի նկատմամբ իրենց թշնամական վերաբերմունքը դավանանքի տարբերությունների վրա խարսխելու և խտրականություն քարոզելու գործում: Եվ իրոք, քրիստոնեական հավատքի գործունը շատ որոշիչ էր ոչ միայն հայերի, այլև այդ տարածքում բնակվող այլադավան մյուս ժողովուրդների համար, քանզի հայտնի է, որ թուրքի որակմամբ՝ ցանկացած ոչ մուսուլման անհավատ էր (գյավուր)³: Թուրքիայի հակաքրիստոնեական կեցվածքի վկայությունն է նաև այն փաստը, որ քրիստոնյա այլ ազգեր (հույները, ասորիները, բուլղարները, սերբերը) նույնպես անընդհատ ճնշման տակ էին. նրանք ևս հայերի նման կողոպտվում էին ու ամեն տեսակ հալածանքի ենթարկվում:

Թյուրքականության մարմաջը հանգիստ չէր տալիս օսմանյան իշխանություններին, որոնք ցանկանում էին նրանց բոլորին ոչնչացնել կամ առնվազն տեղահանել իրենց բնակավայրերից և ընդհանրապես երկրից, ինչպես նաև ընդլայնել կայսրության տարածքներն ու ստեղծել թյուրքական գերտերություն՝ միակրոն հասարակությամբ⁴: Ակնհայտ է, որ աղբրեջանցի

историко-типологический анализ праязыка и протокультуры, т. 1-2, Тбилиси, 1984, **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան, 1986, **Sahakyan L.**, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2011:

¹ «Արևելյան Անատոլիա» տերմինը ոչ այլ ինչ է, քան մենիմաստ բաղադրիչների կապակցում, որոնք երկուսն էլ «արևելք» իմաստն ունեն: Հորինված տերմինի շինծու և անհեթեթ բնույթը բացահայտվում է դրա բառացի թարգմանության մեջ՝ «Արևելյան Արևելք»: Տե՛ս **Sahakyan L.**, նշվ. աշխ., էջ 31, 46:

² **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007:

³ «Գյավուր» բառը թուրքերեն է մուտք գործել արաբերենից XVI դարի երկրորդ կեսից և օգտագործվել է Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյա ազգային փոքրամասնություններին և հատկապես հայերին վիրավորելու համար (**Ginther J.**, The Westminster Handbook to Medieval Theology, Louisville, Kentucky, 2009): <https://books.google.am/books?id=n2WnNX13tsYC&printsec=frontcover&dq=isbn:9780664223977&hl=en&sa=X&ved=2ahUKEwjSht_CrcP u AhVEIYsKHUN1ARoQuwUwAHoECAAQBg#v=onepage&q&f=false>: Տե՛ս նաև **Gasparyan S.**, The Armenian Genocide: A Linguocognitive Perspective, Yerevan, 2014, p. 61-62):

⁴ XIX-XX դարերում ձևավորված պանթյուրքիզմի գաղափարախոսությունը ջատագովում է թյուրքական ժողովուրդների միավորումը մշակութային, լեզվական, կրթական, փիլիսոփա-

անանուն հեղինակը շահեկան է համարում շրջանցել ևս մի կարևոր փաստ՝ դեռևս 1910-1911 թվականներին Սալոնիկում՝ երիտթուրքերի կուսակցության համաժողովներում օրակարգային դարձած այն հարցը, թե ինչ մեթոդներով և ինչպիսի մեխանիզմների կիրառմամբ կարող են հասնել երկրում թուրք մուսուլմանների գերակշռության: Փաստորեն ցեղասպանության գագաթնակետը համարվող 1915 թվականից առաջ նրանք արդեն նախանշել ու ծրագրել էին¹, իսկ հետագայում նաև հրահրեցին, կազմակերպեցին ու աջակցեցին ցեղասպան գործողություններին: Դրա վկայությունն է նաև Թուրքիայի կառավարական մարմինների որդեգրած քաղաքականությունը, որի կարևորագույն կետերից էր կյանքի կոչել մնացած հայ բնակչությանը մուսուլման դարձնելու որոշումը: Ու որքան էլ թուրք և թրքահաճո արևմտյան գրչակները, կեղծ ու հորինված պատճառներ բերելով, սքողեն օսմանյան իշխանությունների ծավալապաշտական նկրտումների իրականացմանն ուղղված ցեղասպանության փաստերը² կամ որպես մեղմացուցիչ հանգամանք փորձեն դիտարկել դրանք Առաջին աշխարհամարտի անբարենպաստ համատեքստում, միևնույն է, անհնար է հերքել անհերքելիս³: Հայկական հետքը հայոց բնօրրանից վերջնականապես և անվերապահորեն ջնջելու թուրքական պետական քաղաքականության հետևողականության դրսևորումներից են նաև ոչ միայն Արևմտյան Հայաստանում հայկական տեղատնտեսների թուրքացման շարունակական գործընթացը⁴, բռնի կրոնափոխված

յական և, որ առավել կարևոր է թուրքերի համար, գերիզոր տերության ստեղծման ռազմական հիմքի վրա:

¹ Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայկական հարցը, Երևան, 1995, նաև The Salonika Congress – Young Turks and Their Programme (“The Times”, 3 Oct. 1911, p. 3): <<http://moneyingreece.org/library/the-salonika-congress-the-times-3-oct-1911>>.

² Տե՛ս օրինակ՝ **Gürün K.**, The Armenian File, New York, 1985, **Uras E.**, The Armenians in History and the Armenian Question, Istanbul, 1988, **Lewy G.**, The Armenian Massacre in Ottoman Turkey: A Disputed Genocide, University of Utah Press, 2004, **Danisman H. B.**, An Armenian Question...? Let’s Consider...! Istanbul, 2005: Այս մասին տե՛ս նաև **Gasparyan S.**, The Speech Strategy of Erzats-Historians in Interpreting The Armenian Genocide // “Genocide as a Spiritual and Moral Crime Against Humanity”. Proceedings of International Scientific Conference (Oct. 23-23, 2015), Moscow, 2015, p. 212-220:

³ Տե՛ս **Suny R.**, Looking toward Ararat: Armenia in Modern History, Bloomington and Indianapolis, 1993: Այս կապակցությամբ հետաքրքրական է թուրք պատմաբան-հանրաբան Թաներ Աքչամի պարզաբանումն այն մասին, որ Առաջին աշխարհամարտի փաստը որևէ կերպ չի կարող Հայոց ցեղասպանության իրականացման պատճառ համարվել: Այդ պատերազմը չի պարտադրվել Թուրքիային, ընդհակառակը՝ Թուրքիան ինքն է ճանապարհներ փնտրել ու խցկվել պատերազմի մեջ, որովհետև թուրքական իշխանությունները պատերազմը գնահատել են որպես չափազանց հարմար առիթ՝ իրենց կանխավ մտածված ցեղասպանական ծրագիրն իրականացնելու համար: Տե՛ս **Akcam T.**, A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York, 2006. Այս մասին տե՛ս նաև **Gasparyan S.**, The Question of the Armenian Genocide in Taner Akçam’s Interpretation. Armenian Folia Anglistika // “International Journal of English Studies”, 2017, Vol. 13, n° 1-2 (17) p. 175-186:

⁴ Տե՛ս **Sahakyan L.**, նշվ. աշխ.:

հայերի սերունդների տարածքային խոսվածքը (ի մասնավորի համշենահայերենը¹) որպես թուրքերենի բարբառ «գիտականորեն հիմնավորելը», այլև ներկայի՝ Արևելյան Հայաստանի տարածքների նկատմամբ հնչող թուրքադրբեջանական հավակնոտ հայտարարությունները:

Վերոբերյալը հիմք է տալիս մտածելու, որ ադրբեջանական կայքէջում հրապարակված հոդվածի անանուն հեղինակը կամ, ցավոք, անտեղյակ է բերված և բազմաթիվ այլ փաստերի, կամ վճռական մտադրություն ունի իրականացնելու հակահայկական քարոզչություն և համոզելու ընթերցող հանրությանը, թե թուրքահայությունը հենց ինքն է մեղավոր 1915 թ. տեղի ունեցած իրադարձությունների համար, քանի որ ենթարկվել է հայկական տարաբնույթ կազմակերպությունների սադրիչ դրդումներին և ընդվզել օսմանյան կառավարության դեմ: Նույնիսկ թուրք պատմաբան, Ստամբուլի Սաբանջը համալսարանի պրոֆեսոր Հալիլ Բերքթայը վստահ է, որ 1914-1915 թվականներին հայկական ապստամբության կամ ազգային այլ ապստամբության մասին ակնարկ անգամ չի եղել: Նա փաստում է, որ հայկական կազմակերպությունների առանձին անդամների որոշ քայլեր, եթե անգամ այդպիսիք եղել են, ոչ մի դեպքում չէին կարող հրահրել թուրքական կառավարության իրականացրած անարգ քաղաքականությունը²: Հետևաբար՝ հոդվածագիրը, շահարկելով չեղած փաստերը, ջանում է մեղավորին չքմեղացնել և սարսափելի անբարո ու որևէ ներում չճանաչող հանցագործությունների ծանրագույն բեռը դնել անմեղի ուսերին:

Հոդվածում հատուկ ուշադրության է արժանի *Armenian (հայկական)* անվանի փոքրատառ գործածությունը, որը մի կողմից անզլերենում ամրակայված կանոնների ուղղակի անտեսում է, որը հաստատվում է հոդվածի հետագա պարբերություններում հայտնվող նմանատիպ դեպքերով, իսկ մյուս կողմից՝ հեղինակի՝ թուրք եղբայրներից ժառանգած արհամարհանքի և թշնամանքի բացահայտ արտահայտություն՝ հայերի դեմ:

Համոզիչ թվալու և իր ընթերցողների վրա ակնկալվող տպավորությունը գործելու համար հեղինակը չի հապաղում կեղծ թվեր ներմուծել դիսկուրս («Արևելյան Անատոլիայում հայերը կազմում էին ընդհանուր բնակչության ընդամենը 15%-ը»), ուստի նորից ստիպված ենք տարակուսել. արդյոք անգիտակցաբար, թե՛ մտաշահարկման նպատակներով է հեղինակն անտեսում պատմականորեն արձանագրված ու հայտնի տվյալները³:

¹ Այդ մասին տե՛ս օրինակ՝ **Աճառյան Հ.**, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, **Սահակյան Լ.**, Հայկական երգերը՝ բռնի կրոնափոխված համշենցիների ինքնության հիշողություն և դրսևորում // Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. V, Երևան, 2008, էջ 243-261, **Гаспарян С. К., Саакян Л. С.**, Национальная идентичность в зеркале языка и культуры // Язык, культура и “мягкая сила”, Гуанчжоу-Екатеринбург, 2018, с. 47-55:

² Տե՛ս Թուրքերը թուրքերի մասին, կազմ. և խմբ. Ռ. Մելքոնյան, էջ 39-40:

³ Պողոս Նուբար փաշայի՝ 1913 թ. հունիսի 1-ին, Ֆրանսիայի Սահակյան ընկերության նախաձեռնությամբ և հայ ազգային պատվիրակության ջանքերով կազմակերպված Եվրո-

Հեղինակի մտաշահարկման մարտավարության զինանոցը բավականին հարուստ է. ժխտողականություն, սուտ տեղեկատվություն, որ իրականացվում են լեզվական միավորների բացթողնմամբ, հակառակորդին ուղղված մեղադրանք այն բանի համար, ինչում տվյալ դեպքում մեղադրվում են հենց իրենք՝ թուրքերը, և այլն: Օգտագործելով այս մարտավարությունները՝ հեղինակը փորձում է շրջանցել ակնհայտ մանրամասներ կամ կեղծել դրանք՝ խեղաթյուրելով իրական փաստերը ներկայացնող ամբողջ տեղեկատվությունը և հերքելով թուրքերի ու թուրքական իշխանությունների կատարած բոլոր ապօրինությունները: Սակայն գիտակցելով, որ չափազանց դժվար է թուրք եղբայրներին «ջրից չոր դուրս բերելը»՝ հեղինակն իր քաղաքական նպատակներին հասնելու համար հակադարձում է հարձակումը:

Նույն հողվածի հաջորդ հատվածը հետաքրքիր է մասնավորապես այն իմաստով, որ այստեղ ըստ էության ներկայացված է Հայոց ցեղասպանության թուրքական կառավարության մշակած սխեմայի մաս կազմող մի շարք մեխանիզմների և մեթոդների նկարագրությունը (չնայած հակադարձված):

Entire population of the region was subjected to violence beyond belief violence which was planned to exterminate the whole Turkish people of the region to the last man, woman and child. Armenian revolters tortured and massacred large numbers of defenseless civilians. To assemble innocent civilians in the mosques and burn them in the building was one of their methods. Even today the traveler in that region is seldom free from the evidence of these armenian crimes.

Մարզի ամբողջ բնակչությունը բռնության ենթարկվեց, բռնություն, որը ծրագրում էր ոչնչացնել տարածաշրջանի բոլոր թուրքերին մինչև վերջին տղամարդը, կինն ու երեխան: Հայ ապստամբները խոշտանգում և կոտորում էին մեծ թվով անպաշտպան քաղաքացիական անձանց: Մզկիթներում անմեղ քաղաքացիական անձանց հավաքելը և շենքում նրանց այրելը հայերի մեթոդներից մեկն էր: Նույնիսկ այսօր այդ տարածաշրջանում ճանապարհորդը հագվադեպ կարող է գերծ մնալ հայերի այդ հանցագործությունների ապացույցներին ականատես լինելուց:

պայի հայկական կոմիտեների երկրորդ ընդգրկուն համաժողովի նիստում ներկայացրած ելույթի տեքստը // Հայոց ցեղասպանության Երուսաղեմի արխիվ, տուփ 1, թղթապանակ Ե, 487-504: Տե՛ս նաև **Մարտիրոսյան Մ.**, Դրվագներ հայ ազգային պատվիրակության գործունեությունից // «Էջմիածին», 2010, թիվ Ը, էջ 84-95, **Marashlian L.**, Politics and Demography: Armenians, Turks and Kurds in the Ottoman Empire, Cambridge, Mass., 1991, **Dadrian V.**, Ottoman Archives and Denial of the Armenian Genocide. The Armenian Genocide: History, Politics, Ethics, New York, 1992, p. 294, 308: Վ. Դադրյանը մասնավորապես վկայակոչում է հավաստի տվյալներ, որոնք բացահայտում են տարբեր գիտնականների՝ Թուրքիայի կառավարության արատավոր կեղծիքների քաղաքականությունը աստարող ժողովրդագրական միտումնավոր խախտումները: Այս ամոթալի կեղծիքների քննադատության մասին տե՛ս նաև **Սյվազյան Ա.**, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Երևան, 1998, **Սահակյան Լ.**, Բարձր Հայքի Բարբեր, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, էջ 47-70:

Ինչպե՞ս մեկնաբանել այս հակադարձումը: Եթե սա կատարյալ տգիտություն չէ կամ մեղմ ասած՝ անտեղյակություն՝ Հայոց ցեղասպանության վաղուց արդեն արձանագրված, հաստատված և լրագրողական ու գիտական մեկնաբանություններով ընթերցող միջազգային հանրությանը հայ և օտար հեղինակների ներկայացրած փաստերին¹, ապա ակնհայտ մտաշահարկում է հակադարձման² մարտավարության կիրառմամբ, որը միտված է սուտ տեղեկություններ մատուցելու և քարոզչություն իրականացնելու և, որ ամենակարևորն է, իրենց թուրք աջակիցներին տեսանելի դարձնելու վերջիններիս անվերապահորեն ծառայելու ադրբեջանական հաշվենկատ պատրաստակամությունը: Դժվար է հավատալ, որ հեղինակը լիովին անտեղյակ է աշխարհի ողջամիտ և ազնիվ գիտական մտքի, պետական ու քաղաքական գործիչների³ տարբեր հարթակներում արտահայտած և հրապարակած անվերապահ դատապարտումներին, վերապրածների վկայություններին, որոնք խոսվել են, գրվել ու ամրագրվել հարյուրավոր հատորներում, արխիվային փաստաթղթերում, տեսանյութերում, իմաստավորվել ֆիլմերում ու զեղարվեստական գրականության մեջ⁴: Գուցե հողվածի անանուն հեղինակին

¹ Տե՛ս **Wegner A.**, *Der Weg ohne Heimkehr* (The Road of No Return), Berlin, 1919, Fleischel, **Dadrian V.**, *A Review of the Main Features of the Genocide* // “Journal of Political and Military Sociology”, 1994, Vol. 22, n° 1, Northern Illinois University, p. 1-28, **Dadrian V.**, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Providence & Oxford, 1995, **Dadrian V.**, *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification*, Canada, 1999, **Ներսիսյան Մ. Գ.**, *Պատմության կեղծարարները. հողվածներ և հաղորդումներ*, Երևան, 1998, **Sassounian H.**, *The Armenian Genocide. The World Speaks Out: 1915-2005*, Glendale, 2005 և այլն:

² Հակառակորդին մեղադրելու մանիպուլյատիվ մարտավարության մանրամասները տե՛ս **Paul R. & Elder L.**, *The Thinker’s Guide to Fallacies: the Art of Mental Trickery and Manipulation*. Foundation for Critical Thinking, Lanham-Boulder-New York-London, 2004: <http://www.critical-thinking.org/store/get_file.php?inventories_id=159&inventoriesfilesid=406>: Այս մարտավարությունը երբեմն անվանում են «մատնանշել մեկ այլ սխալ», քանի որ այն գործի դնելով՝ մտաշահարկողը փորձում է մեղադրել իր հակառակորդին և համոզել իր ընթերցողին, որ դիմացինը նույնիսկ ավելի վատ գործողություններ է կատարել:

³ Այդպիսի բազմաթիվ օրինակներից է գերմանացի գեներալ Լիման ֆոն Ջանդերսի թարգմանիչ, մեծ հումանիստ և խաղաղության ջատագով Հայնրիխ Ֆիրբյուխերի գիրքը (**Vierbrücher H.**, *Armenien 1915*, Bremen, 2003), որտեղ նա՝ որպես թուրքական բանակի մարտունակության համար որոշակի պատասխանատվություն կրող և ականատես, պատմում է թուրքական կառավարության նախօրոք ծրագրած ցեղասպանության իրականացման սխեմայի մասին: <<https://www.perlentaucher.de/buch/heinrich-vierbuecher/armenien-1915.html>>:

⁴ Տե՛ս **Miller D. E. & Miller L. T.**, *Survivors: an Oral History of the Armenian Genocide*, Berkely, 1993, **Svazlyan V.**, *The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors*, Yerevan, 2011, **Jamalzadeh Muhammad-Ali** – 125, 2017, *The Armenian Genocide Museum-Institute Foundation*, **Arslan A.**, *La Messeria Delle Allodole*, Milano, 2004, **Գուսպչ Գ.**, *Հայկական տոհմաձառը*, Երևան, 2005, *նույնի*՝ *Հայոց կտակ*, Երևան, 2011, *նույնի*՝ *Մայիսակ լեռը*, Երևան, 2015, և այլն: Օրինակ՝ XX դարի ականավոր պարսիկ գրող Մուհամմադ Ալի-Ջամալզադեն, 1917 թ. ճանապարհորդելով դեպի Կոստանդնուպոլիս, ճանապարհին ականատես դարձավ հայերի նկատմամբ իրականացվող այնպիսի դաժան ու ցնցող վայրագությունների, որ ավելի ուշ անկարող եղավ զերծ

թվում է, թե որքան անթաքույց անպատկառությամբ ու գլխիվայր շրջված ներկայացվեն պատմական հայտնի փաստերն ու իրադարձությունները, այնքան ավելի համոզիչ կհնչի իր պատմությունը:

Ակնհայտ է իհարկե, որ կիրառելով կարևոր փաստական իրողություններն անտեսելու խոսքային մարտավարությունը¹ հեղինակն այնքան հեռուն է գնում, որ խոսքը հարմարեցնելով կանխորոշված քարոզչությանը՝ իրականությունն ըստ էության շրջում է գլխիվայր և նույնիսկ փորձ չի անում նրբանկատորեն քողարկելու իրական ճշմարտությունը:

Մեր անդրադարձը հողվածի մեկ այլ հատվածի ականա հիշեցնում է օտարերկրյա առաքելությունների, քաղաքական ու պետական գործիչների ճանապարհորդական հուշագրությունների մեծ ծավալը, որտեղ նրանք բազմաթիվ փաստեր ու բարեհաճ տպավորություններ են ներկայացնում թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում ապրող հայերի մասին՝ բացահայտելով հայի քաղաքակիրթ, ազնիվ ու բարի, աշխատասեր ու հյուրընկալ կերպարը²: Ֆրանսիացի պատմաբան-լրագրող Ռենե Պինոնը վստահ է, որ հայերի բռնի տեղահանությունն ու սահմոկեցուցիչ ծավալներով ու մեթոդներով իրագործված կոտորածները (*մտավորականներ, քաղաքական գործիչներ, քաղաքացիական անմեղ անձինք անապատ էին ուղարկվում առանց սննդի ու ջրի և կոտորվում հենց ճանապարհին, կանանց բռնաբարում, ստրկացնում և ուղարկում էին հարեւ, երեխաներին կրոնափոխ անում և այլն*) երիտթուրքերի կանխորոշած ծրագիրն էին³:

մնալ իր սարսափելի տպավորությունները թղթին հանձնելու գաղափարից և հրատարակեց երկու գիրք. “Qatl o garat-e Armaneh dar Torkiya” (On the Massacres of Armenians in Ottoman Turkey) (1963) և “Qatl-e Amm-e Armanian” (Armenian Massacres) (1972). Cf. “Jamalzadeh, Mohammad-Ali”. The Armenian Genocide Museum-Institute Foundation. <<http://www.genocide-museum.am/eng/20.10.2017-Jamalzadeh.php>>: Բսկ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Սվալյանը Հայոց ցեղասպանությունը վերապրածների վկայությունները ներկայացրել է իր «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրածների վկայություններ» ծավալուն աշխատության մեջ, որտեղ ամփոփել է վերապրածների իր ավելի քան 55 տարվա ընթացքում արձանագրած հուշերը՝ լուսանկարներով, տարբեր բնօրինակ փաստաթղթերի պատճեններով ու բազմաթիվ ձայնագրություններով, որոնք հաստատում են Թուրքիայի կողմից մշակված և իրագործված հայասպանության պատմական ճշմարտությունը: Տե՛ս **Svazlyan V.**, նշվ. աշխ.:

¹ Այդ մարտավարության կիրառումը, ըստ Սայմոնի՝ համարվում է ստի մատուցման նուրբ ձևերից, սակայն տվյալ հողվածում գործ ունենք դրա ամենաճարտեսող դրսևորման հետ, որը ծառայեցված է հակահայկական քարոզչության իրականացմանը՝ ակնհայտ քաղաքական նկատառումներով: Տե՛ս **Simon G. K.**, In Sheep’s Clothing: Understanding and Dealing with Manipulative People, Michigan, 1996:

² Տե՛ս օրինակ՝ **Buxton N. & Buxton H.**, Travel and Politics in Armenia. With an Introduction by Viscount Bryce, London, 1914, **Melville Ch.**, The Land of the Stalking Death. A Journey Through Starving Armenia on an American Relief Train // “The National Geographic Magazine”, 1919, Vol. XXXVI, n° 5, p. 393-420, <https://archives.webaram.com/dvdk_new/eng/national-geographic-november-1919_OCR.pdf>, **Baum W.**, Die Türkei und Ihre Christlichen Minderheiten: Geschichte – Völkermord – Gegenwart. Ein Beitrag zur EU-Erweiterungs-Debatte, Kitab, Klagenfurt, 2010, և այլն:

³ Տե՛ս **Pinon R.**, La suppression des Arméniens. Méthode allemande – travail turc, Paris, 1916, p.

Հոդվածի հաջորդ հատվածում հեղինակին անհանգստացնում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայկական հրապարակումների ծավալների ավելացման փաստը:

The Armenian historians and instigators exciting young people's minds publish much on the genocide. And with every decade a number of "the murdered" increases in the geometric progression. Manipulation of figures, rough misrepresentation of historical facts - it is a principal weapon of the Armenian falsificators whom as long ago as the beginning of the century unmasked above-mentioned Ilya Chavchavadze in his book "The Armenian scientists and screaming stones".

Հայ պատմաբանները շատ են հրատարակում ցեղասպանության մասին՝ դրանով իսկ բորբոքելով երիտասարդության միտքը: Եվ յուրաքանչյուր տասնամյակում «սպանվածների» քանակն ավելանում է երկրաչափական պրոգրեսիայով: Թվական տվյալների շահարկումը, պատմական փաստերի կոպիտ խախտումները հայ կեղծարարների հիմնական զենքն են: Նրանց դեռևս դարասկզբին դիմակազերծել է վերոնշյալ Իլյա Ճավճավաձեն իր «Հայ գիտնականները և ճչացող քարերը» գրքում:

Հեղինակի կարծիքով՝ այդ ժամանակաշրջանի զանգվածային սպանություններին վերաբերող թվերը հայկական հրապարակումներում չափազանցված են ու շահարկված: Բայց այստեղ կրկին շրջանցվում են արձանագրված փաստերը¹, և կարևոր իրողությունների անտեսման՝ մտաշահարկման նպատակ հետապնդող մարտավարության² գործադրումը կրկին հակասության մեջ է մտնում հեղինակի կանխակալ այն գաղափարի հետ, որ հայերն են զանգվածային սպանություններ իրականացրել թուրքերի նկատմամբ: Երբ այս հատվածը համեմատվում է հոդվածի առաջին հատվածների հետ, հասկանալի է դառնում, որ այստեղ տողերի արանքում ներակայված իմաստը բացահայտում է հեղինակի՝ հայերի կողմից թուրքերի բնաջնջման հարցում համոզվածության պակասը: Ո՛չ, իհարկե նա համոզված չէ իր իսկ խոսքերի ճշմարտացիությանը, այլ պարզապես իրեն պարտադրված առաջադրանքն է կատարում: Հայտնի փաստերի բացթողումը օգնում է հեղինակին խթանելու թուրքական ժխտողականության հորինված գաղափարախության շրջանառությունը, սատար կանգնելու վայ-պատմաբանների ստա-

20-27: <<http://www.imprescriptible.fr/documents/pinon>>, Armenian Genocide, October 1, 2010. <<https://www.history.com/topics/world-war-i/armenian-genocide>> և այլն:

¹ Չէ՞ որ հայտնի և միանգամայն հաստատված փաստ է, որ Օսմանյան կայսրությունում բնակվող շուրջ 2.5 միլիոն հայերից 1.5 միլիոնին թուրքերը կոտորել են, իսկ մնացածին ամենադժան պայմաններում պարտադրվել է բռնագաղթ և հավատափոխություն: (Տե՛ս Հայոց պատմություն, 2015, էջ 52-64, **Redgate A. E.**, The Armenians, GB, 1998, Blackwell, p. 271 և այլն):

² Օգտագործելով փաստերը շրջանցելու մարտավարությունը, որը սուտ խոսելու բավականին նուրբ ձև է, հեղինակը այնքան հեռուն է գնում, որ իր խոսքը հարմարեցնում է իր կանխորոշած քարոզությանը և իրականությունն ամբողջովին գլխիվայր շրջում: Տե՛ս **Simon G. K.**, In Sheep's Clothing: Understanding and Dealing with Manipulative People, Michigan, 1996:

հող գաղափարներին, որոնք անկարող են եղել դիմակայելու թուրքական կեղծիքի շոայլ գայթակղություններին¹:

Ինչ վերաբերում է հեղինակի հոմանը Իլյա Ճավճավաձեի գրքին², ապա հարկ է ուղղակիորեն նշել, որ այն հրատարակվել է 1902 թ. և բացարձակապես որևէ առնչություն չունի ցեղասպանության և ցեղասպանական իրադարձությունների հետ և ընդհանրապես չի կարող հուսալի հոման սկզբնաղբյուր համարվել, քանի որ, չնայած Ի. Ճավճավաձեի բանաստեղծական և հրապարակախոսական անվիճելի հեղինակությանը, նրա գրվածքը գիտական ու փաստական հիմնավորվածություն չունի և նման է լրագրային ճամարտակության: Այն ընդամենը բացասական հույզերով լի անհիմն քննադատություն է, որը վաղուց արդեն վերլուծվել և որակվել է որպես ճշմարտության և ստի, իրականի և անիրականի անհաջող խառնուրդ՝ հղված գոյություն չունեցող փաստերի³: Հիշեցնենք հողվածի հեղինակին, որ յուրաքանչյուր պատմական փաստ պետք է քննարկվի ու մեկնաբանվի փաստացի իրավիճակի համատեքստում, եթե ակնկալվում է ճշմարտացի մեկնաբանություն:

Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ իր անտրամաբանական ու չորոշարկված պնդումներում հեղինակն առաջնորդվում է խուսանավման մեթոդով⁴ միաժամանակ գործի դնելով հակառակորդին մեղադրելու իր մարտավարությունը, ընդ որում մեղքը անիրավի բարդելով հայ

¹ Ջավեշտի է նման այն տեղեկությունը, որ, օրինակ, ամերիկացի պատմաբան Գյունտեր Լյուին իր բացահայտ թրքամետ գործունեության և հատկապես իր “The Armenian Massacre in Ottoman Turkey: A Disputed Genocide” գրքի համար, որը թուրք գրախոսների որակմամբ (**Balci F., Akgul A.**, Book Review: The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide. Journal of Turkish Weekly. <www.turkishweekly.net/article/186>) պատմական փաստերի ճշմարիտ մարմնավորում է, արժանացել է թուրքական իշխանությունների շոայլ հատուցմանը, ավելին՝ նաև պարզ և ստացել «Մարդկության դեմ կատարվող հանցագործությունների դեմ պայքարելու համար»: Տե՛ս **Kechichian Joseph A.**, The Armenian Genocide and an Updated Denial Initiative: A Review Essay // “Genocide Studies and Prevention: An International Journal”, Vol. 2, Iss. 2, Article 6, 2007, p. 173-181: <<https://scholarcommons.usf.edu/gsp/vol2/iss2/6/>>: Տե՛ս նաև <<http://www.turkishweekly.net/article/186/book-review-the-armenian-massacres-in-ottoman-turkey-a-disputed-genocide.html>>:

² Ի. Ճավճավաձեի աշխատանքը, որը հողվածագիրը ներկայացնում է որպես գիրք, ընդամենը հողված է՝ հետագայում տպագրված որպես փոքրիկ գրքույկ (**Чавчавадзе И. Г.**, Армянские ученые и вопиющие камни (перевод с грузинского Н. И. Алексеева-Месхиева), Тифлис, 1902): Տե՛ս <<http://www.amsi.ge/istoria/somx/kamni.html>>:

³ Այս հողվածը վճռականորեն մերժվել է հեղինակավոր շատ գիտնականների կողմից և չի կարող համարվել հավաստի: Տե՛ս, օրինակ, **Вермишев Х.**, Материалы для истории грузино-армянских отношений; ответ на книжку кн. И. Г. Чавчавадзе – Армянские ученые и “вопиющие камни”, Санкт-Петербург, 1904, Пушкинская Скоропечатня:

⁴ Ըստ Ջորջ Սայմոնի՝ խուսանավումը շատ կարևոր և բավականին արդյունավետ կիրառվող մարտավարություն է խոսքի մտաշահարկման ռազմավարության համատեքստում: Այն մարտավարական գործիք է, որը, շեղելով ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը, կարող է ինքնապաշտպանության ազդեցիկ գեներալաբա: Տե՛ս **Simon G. K.**, նշվ. աշխ., նաև **Simon G. K.** Confronting Evasion and Diversion. <<https://www.drgeorgesimon.com/confronting-evasion-and-diversion-tactics/>>:

ժողովրդի վրա՝ փորձում է համոզել աշխարհին, թե թուրքերն անմեղ են, և հենց նրանք են, որ կոտորվել են հայերի կողմից:

The state is having an internecine battle with invaders but at this time in the rear there have been found people undermining the rear with armed uprising and favoring defeat of the country where they live. Any state is obliged to take safety measures. The measures are extreme but forced and justified for the future of their people. History will tell us more about this.

Պետությունը ներքին մարտ է վարում զավթիչների հետ, բայց այս պահին թիկունքում հայտնաբերվել են մարդիկ, որոնք թուլացնում են այն զինված ապստամբությամբ և նպաստում այն երկրի պարտությանը, որտեղ նրանք ապրում են: Ցանկացած պետություն պարտավոր է ձեռնարկել անվտանգության միջոցառումներ: Միջոցները ծայրահեղ, բայց հարկադրված և արդարացված են՝ ժողովրդի ապագայի առումով: Պատմությունն այս մասին ավելին կպատմի մեզ:

Տեքստի այս հատվածում հերքելով թուրքերի չարագործությունները և ջանալով պատահածի համար արդարացումներ գտնել՝ հեղինակը կրկին փորձում է մանիպուլացնել ընթերցողին՝ դահճի մեղքը մեղմելով ու նվազագույնի հասցնելով՝ դրանով իսկ կասկած ու շփոթումնք հարուցելով ընթերցողի կշռադատված ընկալումներում և թուրքական իշխանությունների գործողությունները հիմնավորելով երկրի և թուրք ժողովրդի անվտանգության նկատառումներով: Հեղինակի մտաշահարկային մարտավարությունները, իհարկե, կարող են առաջին հայացքից որոշակի ազդեցություն գործել ընթերցողի վրա, սակայն, անշուշտ, անտեղյակ կամ անուշադիր ընթերցողի, քանզի հողվածագիրը մի կողմից հերքում է թուրքերի՝ հայ ազգաբնակչության դեմ կազմակերպած ու իրականացրած սպանող, բայց մյուս կողմից թուրքերի ձեռնարկած ծայրահեղ քայլերը (*the measures are extreme*) ջանում է արդարացնել այն կեղծ գաղափարի ներմուծմամբ, որ հայերը թուրքական բանակի դավաճաններ էին, և թուրքերը ստիպված էին պաշտպանվել հանուն իրենց անվտանգության: Այստեղ ընթերցողը նորից բախվում է հեղինակի հակասական մտքերի անհամատեղելիության փաստին: Հավաստիության ու հիմնավորվածության պատրանք ստեղծելու և իր նպատակադրած քաղաքական նպատակին հասնելու համար հեղինակը դիմում է պաշտոնական սկզբնաղբյուրների՝ մեջբերելով Թուրքիայի Ներքին գործերի նախարար Թալեթ փաշայի խոսքերը, որտեղ օսմանյան տեղական իշխանություններին ուղարկած իր ցուցումներից մեկում վերջինս խորհուրդ է տալիս հայերի տեղահանությունների իրականացման համար պատասխանատու մարմիններին անվտանգության միջոցներ ձեռնարկել և կանխել արտասահմանցի ճանապարհորդների՝ բռնի տեղահանման երթերի ընթացքում տեղի ունեցող դեպքերի մասին խոսելու կամ դրանք լուսաբանելու հնարավորությունը: Ցանկացած այդպիսի մեկնաբանություն կհակասի արտասահմանյան դեսպանատներին տրամադրվող պաշտոնական տեղեկատվությանը, և դա, անշուշտ, կվարկարեկի Թուրքիայի կառավարությանը: Ավելին՝ իրենց սարսափելի

ցեղասպան գործողությունները թաքցնելու համար նախարարը «խորհուրդ է տալիս» ձեռքբերել և պատերազմի խորհրդին հանձնել բոլոր նրանց, ովքեր տեղեկություններ են տարածում հայերի կոտորածների մասին:

“As it is evident from the recent interference of the american, english, french and russian embassies in Constantinople and in some places the consuls of these embassies in secret receive false information in spite of our answer that the armenians’ deportation takes place in complete safety and quietness. It is not enough to persuade them. Take all safety measures and do your best that at the moment when the armenians from cities, districts and centers are on their way the events would not take place about which the foreigners and armenians themselves speak so much. It is very important from the point of view of our present-day policy the foreigners passing through these places to be convinced that the armenians’ deportation is really with the aim of transferal. As regards those who give information concerning this question I recommend you to arrest and give them to the council of war”.

Ministry of Internal affairs. TALAAT. November 18, 1915

«Բնչպես պարզ է դառնում վերջերս Պոլսում Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանատների միջամտությունից և որոշ այլ տեղերում դեսպանատների հյուպատոսները գաղտնի տեղեկություններ են ստանում՝ չնայած մեր պատասխանին, որ հայերի տեղահանումը կատարվում է լիովին անվտանգ: Նրանց համոզելը բավարար չէ: Ձեռնարկեք անվտանգության բոլոր միջոցները և ամեն ինչ արեք, որ այն պահին, երբ քաղաքներից, գյուղերից և այլ կենտրոններից հավաքած հայերը ճանապարհ են ընկնում, այնպիսի իրադարձություններ տեղի չունենան, որոնց մասին այդքան խոսելու առիթ ունենան ինչպես իրենք հայերը, այնպես էլ օտարերկրացիները: Ներկայի մեր քաղաքականության տեսակետից շատ կարևոր է, որ այս վայրերով անցնող օտարերկրացիները համոզվեն, որ հայերի տեղահանությունն իրականում նրանց պարզապես անվտանգ վայրեր տեղափոխելու նպատակն ունի: Բնչ վերաբերում է նրանց, ովքեր այս հարցի վերաբերյալ տեղեկություններ են տարածում, խորհուրդ եմ տալիս ձեռքբերել և հանձնել պատերազմի խորհրդին»:

ՆԳՆ. ԹԱԼԵԱԹ 1915 թ. 18 նոյեմբերի

Ինչպես ցույց են տալիս Թալեաթի խոսքերը, Թուրքիայի Ներքին գործերի նախարարի համար (նրանց ներկայիս քաղաքականության տեսակետից) շատ կարևոր էր ստիպել օտարերկրյա դեսպանություններին և նրանց հյուպատոսներին հավատալ, որ հայերի բռնագաղթը Դեր-Չորի անապատներ և այլուր նպատակ ուներ նրանց տեղափոխելու ավելի անվտանգ վայրեր: Բայց դեսպանատներն իրականում քաջատեղյակ էին, թե ինչ էր կատարվում: 1913-1915 թթ. Թուրքիայում ԱՄՆ դեսպան շենրի Մորգենթաուն իր «Ազգի սպանությունը» գրքում¹ միանգամայն հստակ է գրում թուրքական իշխանությունների հայերի ոչնչացման արդեն ամրագրած ծրագրի մասին: Մորգենթաունի հաղորդմամբ՝ Թուրքիան արատավոր մտադրություններ ուներ հայերին վերջ-

¹ Տե՛ս **Morgenthau H.**, նշվ. աշխ.:

նականապես արմատախիլ անելու երկրից, թեև դեսպանի համոզմամբ՝ հայերը բնակչության ամենախելացի և աշխատասեր մասն էին և դեռ կարող էին շատ օգտակար լինել երկրին¹: Նա այդ մասին գիտեր հենց Թալեաթի խոսքերից: Բանակցությունների ընթացքում, ի պատասխան դեսպանի՝ ցեղասպանական այդ հրեշավոր ծրագրից թուրքական իշխանություններին ետ պահելու ջանքերին, ինքը Թալեաթն էր նրան փաստել, որ հայերի ոչնչացման սխեման վաղուց հաստատված էր, և դրա իրականացումը՝ անշրջելի (... *our Armenian policy is absolutely fixed and nothing can change it*²):

Տեղեկատվական լուրջ հետևություններ կարելի է անել նաև Գերմանիայի դեսպան Վանզենհայմի՝ իր կառավարության ղեկավար, կանցլեր Բերթան-Հոլվեգին ուղարկած զեկույցի հիման վրա, որտեղ պարզ նշված է, որ հենց թուրքական կողմն է, որ, օգտվելով պատերազմական իրավիճակից, փորձում է երկիրը մաքրել «ներքին թշնամիներից», այն է՝ տեղի քրիստոնյաներից.

... it becomes obvious that deportation of the Armenians arises not only from military necessity. The internal minister Talaat bey told about it honestly to doctor Mortsman, who is employed at the empire embassy now. Talaat said: The sublime Porte intends to make use of the world war for cleaning the whole country from internal enemies, the local Christians <....>.

June 17, 1915

... ակնհայտ է դառնում, որ հայերի տեղահանությունը բխում է ոչ միայն ռազմական անհրաժեշտությունից: Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյն այդ մասին անկեղծորեն պատմեց բժիշկ Սորթսմանին, որն այժմ աշխատում է կայսրության դեսպանատանը: Թալեաթն ասաց. «Բարձր դուռը» մտադիր է օգտագործել համաշխարհային պատերազմը՝ ամբողջ երկիրը ներքին թշնամիներից՝ տեղի քրիստոնյաներից մաքրելու համար <....>:

1915 թ. հունիսի 17

Հողվածի վերջին հատվածում հեղինակը «հայկական անկարգություններ» որակումն է տալիս 1893-1918 թթ. Օսմանյան կայսրությունում և 1995 թ. մինչ այժմ Ադրբեջանում տեղ գտած իրադարձություններին: Ընդ որում քաջ գիտակցելով կետադրական նշանների՝ տեքստում որոշակի լրացուցիչ տեղեկատվություն հաղորդելու կարողությունը՝ հեղինակը *Ադրբեջան* տեղանվան կողքին փակագծերում բերում է *Ղարաբաղ*, *Գյոկչա (Սևան)*, *Իրավան (Երևան)*, *Նախիջևան*, *Զանգեզուր* տեղանվանական միավորները՝ ներկայացնելով դրանք որպես ադրբեջանական տարածքների անուններ: Իր քաղաքական նկատառումները ընթերցողին հասանելի դարձնելու համար այս դեպքում նա մեծ ջանքեր չի գործադրում և նույնիսկ չի փորձում մտածել ապացույցների ու հիմնավորումների մասին: Թվում է, թե իմիջիայլոց հատ-

¹ Նույն տեղում, էջ 16-17:

² «... Հայկական հարցի հետ կապված մեր քաղաքականությունը լիովին վերջնականացված է և ... ոչինչ չի կարող այն փոխել»: Այս մասին տե՛ս նշվ. աշխ., էջ 58-59, 66-67:

ված ներմուծված այդ փակագիծը ծառայում է որպես հեղինակի աներկբա համոզմունքի ցուցիչ, ու հենց այդ մեթոդով էլ նա փորձում է համոզել ընթերցողին վստահել իրեն ու իր խոսքին:

Armenian disorders in Turkey since 1893 to 1918 and in Azerbaijan (Karabakh, Goycha, Iravan, Nakhichevan, Zangezur) since 1905 up to present is a convincing illustration of one thing - territorial claim there and only there where they have been given shelter.

Հայկական անկարգությունները 1893-1918 թվականներին Թուրքիայում և 1905 թվականից մինչ օրս Ադրբեջանում (Ղարաբաղ, Գյոլչա, Իրավան, Նախիջևան, Չանգեզուր) համոզիչ վկայությունն են այն բանի, որ հայն ընդունակ է տարածքային պահանջ ներկայացնել այնտեղ և միայն այնտեղ, որտեղ նրան ապաստան են տվել:

Տեղյա՞կ է արդյոք հեղինակն այն փաստին, որ 1893 թվականը համարվում է թուրքերի բարբարոսական գործողությունների և զանգվածային կոտորածների նախերգանքը, որոնք սկսվել են Սասունի դեպքերով և շարունակվել մինչև XX դարի սկիզբը, որի զագաթնակետը եղավ Հայոց ցեղասպանությունը: Եթե մի պահ փորձելու լինենք հետևել Ադրբեջանի հրահրած և սանձազերծած ներկա պատերազմի իրադարձությունների հետագծին, Թուրքիայի աջակցությանն ու փաստացի ներկայությանը, իսլամական ահաբեկիչներին խաբեությանը այս տարածաշրջան տեղափոխելու և պատերազմական գործողություններին ֆիզիկապես մասնակից դարձնելու փաստին և, իհարկե, Ադրբեջանի հետպատերազմական հռետորաբանությանը, ապա պատկերը միանգամայն պարզ կդառնա: Ձեռագիրը փոքր-ինչ փոխվել և արդիականացվել է, անկասկած, բայց հոգեբանությունը նույնն է. Թուրքիայի հեռահար ծրագրերն անփոփոխ են, պանթուրքիզմի և պանթուրանիզմի մարմաջն էլ նույնն է, և այժմ Էրդոդանը փորձում է օգտագործել Ադրբեջանը և Ալիևին որպես հուսալի հենարան իր արատավոր ծրագրերի իրականացման համար: Հեղինակը կրկին շահեկան է համարում գլխիվայր շրջել այն ամենակարևոր ու հիմնարար փաստը, որ Արցախի ժողովրդի համար պահանջը երբեք տարածքային չի եղել, քանի որ նրա արմատները շատ խորն են իր հայրենի հողում¹: Նրանք պայքարում են իրենց անկախության, իրենց ինքնիշխանության և մարդու իրավունքների պաշտպանության համար:

Ինչ վերաբերում է մեծանուն գիտնական Ալեքսեյ Ջիվելեգովից բերված մեջբերմանը, ապա նշենք, որ մեջբերման անգլերեն վերարտադրությունը

¹ Հայաստանի և նրա կազմում Արցախի պատմական տարածքների մասին տե՛ս օրինակ՝ **Ստրաբոն**, Աշխարհագրություն (կազմ. և առաջաբանի հեղ. Մեն Հովհաննիսյան, Երևան, 2011, **Հյուբշման Հ.**, Հին հայոց տեղվո անունները, թարգմ. Հ. Բ. Պիլեգիկճյանի, Վիեննա, 1907, էջ 22-23; **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության // **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 121-122:

մասամբ աղավաղված է (ընդ որում չի նշվում մեջբերման սկզբնաղբյուրը)¹, քանի որ խոսքն այստեղ ոչ թե Մեծ Հայքից հարևան երկրներ տեղափոխված 612 հազար հայերի մասին է, այլ հատկապես ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի նկատմամբ ակնհայտորեն դրսևորվող թշնամական վերաբերմունքի և առանձնապես նոր թափ ստացած համիդյան ջարդերի, որի արդյունքում հայ ազգաբնակչության թվաքանակի որոշակի նվազում է արձանագրվել:

Այն փաստը, որ Հասան Ջեմալը՝ հայ ազգի երեք գլխավոր դահիճներից մեկի՝ Ջեմալ փաշայի թոռը, հրապարակավ ներողություն է խնդրել թուրքերի և անձամբ իր պապի՝ հայերի դեմ կատարած անօրինակ հանցագործությունների համար, Հայոց ցեղասպանության անվիճելի ու անհերքելի վկայություններից է: Երբ նա և բազմաթիվ այլ թուրք մտավորականներ արտահայտում են այն համոզմունքը, թե «Թուրքիան, որպես պետություն, պետք է ներողություն խնդրի հայերից», և 2009 թ. սկիզբ առած ստորագրահավաքի իրենց արշավի արդյունքում ներման խնդրագիր են հրապարակում², իսկ ժամանակի Թուրքիայի վարչապետ Էրդոհանը աշխարհի աչքի առաջ ծաղրում է խնդրագիրը և շատերին դատում ու ազատագրկում է Թուրքիայի Քրեական օրենսգրքի տխրահռչակ 301 հոդվածով, ապա էլ ու՛ր մնաց մարդասիրական ու բարոյական արժեքների գաղափարը, որ թմբկահարվում է ի լուր աշխարհի: Այս կապակցությամբ հետաքրքրական է թեկուզ հպանցիկ հայացք զգել համաշխարհային քաղաքական պատմության զարգացման ընթացքի վրա, որպեսզի ընդունես ցեղասպանագետ Յաիր Աուրոնի դիտարկումների ճշմարտացիությունը: Եվ իրոք, մեր օրերում կարծես արդեն ընդունված նորմ է դարձել, որ քաղաքական դիտարկումները, դիրքորոշումներն ու որոշումները այնքան են հեռացել բարոյականությունից, որ քաղաքականության ու բարոյականության միջև կապը լիովին խզված է: Մինչդեռ

¹ Տե՛ս ճիշտ մեջբերումը **Дживелегов А.**, Будущее Турецкой Армении, Москва, 1911:

² Տե՛ս https://www.google.com/search?q=Hasan+Cemal+%E2%80%93+the+grandson+of+Cemal+Pasha%2C&rlz=1C1CHBF_enAM885AM885&oq=Hasan+Cemal&aqs=chrome.2.0i355i457j46j69i59j0l5.18843j0j9&sourceid=chrome&ie=UTF-8:

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում խնդրագրի անգլերեն և հայերեն տեքստերին.

“My conscience does not accept the insensitivity showed to and the denial of the Great Catastrophe that the Armenians were subjected to in 1915. <...> I reject this injustice and for my share, I empathize with the feelings and pain of my Armenian brothers and sisters. I apologize to them”. (**Özyürek E.**, A Turkish ‘I apologize’ Campaign to Armenians // “Los Angeles Times”, January 5, 2009. (<<https://www.latimes.com/la-oe-ozyurek5-2009jan05-story.html>>):

*«Իմ գիտակցությունը չի ընդունում 1915-ի Մեծ աղետին ենթարկված հայերի նկատմամբ ցուցաբերած անտարբերությունն ու հերքումը: <...> Ես մերժում եմ այս անարդարությունը և կարեկցում եմ իմ հայ եղբայրներին ու քույրերին, կիսում նրանց զգացմունքներն ու ցավը: Ես ներողություն եմ խնդրում նրանցից» (**Օզյուրեկ Ե.**, Թուրքական «Ես ներողություն եմ խնդրում» արշավ հայերի համար. Los Angeles Times, 5 January, 2009): <<https://www.latimes.com/la-oe-ozyurek5-2009jan05-story.html>>:*

հին Հունաստանի փիլիսոփայական միտքը անհանդուրժելի էր համարում գաղափարական այդ երկու կարևորագույն դաշտերի միջև խզված հարաբերակցությունը: Հետագա զարգացումները փիլիսոփաներին (Ն. Մաքիավելլի, Բ. Սպինոզա, Թ. Հոբս) բերեցին այն համոզման, որ այդ խզումը միանգամայն օրինաչափ է, թեև լիբերալ փիլիսոփաները միշտ էլ ջանացել են այդ երկու ոլորտները սերտ կապի մեջ տեսնել¹: Այդ սերտությունն ըստ երևույթին հարկ է դիտարկել որպես անհրաժեշտ օրինաչափություն, քանզի այն կարող է արժեքավոր լինել ժողովրդավարական գաղափարների զարգացման ու տարածման համար ամբողջ աշխարհում:

Եզրակացություն

Ադրբեջանական <Azvision.az> կայքէջի հոդվածի քննությունը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես է տարաբնույթ մեխանիզմների կիրառմամբ՝ հեղինակը փորձում իրականացնել իր հակահայկական քարոզչությունը՝ կեղծելով վաղուց արդեն հայտնի ու հաստատված պատմական փաստերը և խեղաթյուրելով ճշմարտությունը: Ընդ որում հեղինակի առջև դրված մտաշահարկման նպատակի իրականացման անհագուրդ ձգտումը թույլ է տալիս նրան փաստերը շրջել գլխիվայր և ներկայացնել իրական փաստերի հետ որևէ առնչություն չունեցող մի կեղծ «ճշմարտություն»:

Չփաստարկված ու կեղծ տեղեկությունների մատուցումը ոչ միայն անվանարկում և ավելին՝ վարկաբեկում է հոդվածագրին, այլև Հայոց ցեղասպանության մասին անգամ տարրական տեղեկություններ ունեցող ընթերցողին ավելի հստակ պատկերացում է տալիս թուրք-ադրբեջանական անբարո մտածելակերպի ու կեցվածքի մասին և ավելի վճռականություն ներշնչում՝ դատապարտելու Թուրքիայի՝ մարդկության դեմ գործած ամենասարսափելի ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը, և բազմաթիվ այլ ոճիրներ, որ այն շարունակում է գործել:

Սեդա Գասպարյան – Պանթյուրքիզմի մարմաջը և ադրբեջանական մտաշահարկումը

Հոդվածում ներկայացվում են մեր մտորումները <Azvision.az> անվանումը կրող ադրբեջանական առցանց լրատվականում հրատարակված «Հայերի՝ այսպես կոչված ցեղասպանությունը» հոդվածի մասին: Այս ձևակերպման անհեթեթությունը ստիպեց մեզ ուսումնասիրել հոդվածը՝ մտաշահարկման մարտավարության իրականացման տեսանկյունից, որը սովորաբար և անխուսափելիորեն օգտագործվում է այս կարգի հեղինակների կողմից՝ որոշակի քաղաքական նպատակների հասնելու համար: Եվ իրոք, պարզվում է, որ այս հոդվածում ամեն ինչ բացարձակապես գլխի-

¹ Տե՛ս **Auron Y.**, *The Banality of Denial. Israel and the Armenian Genocide*, New Brunswick, 2003:

վայր է շրջված: Փաստերի կանխամտածված ձեռնածությունը, որը բերում է իրականության ահավոր աղավաղման, ինչպես նաև հեղինակի հրեշավոր ամբարտավանությունը մեզ դրդեցին ներկայացնելու ողջամիտ, կոնկրետ ու հիմնավոր փաստեր, որոնք լիովին բացահայտում են անանուն հեղինակի ստահող տեղեկատվությունը: Հոդվածում ներկայացվում են նաև լրացուցիչ փաստեր Հայոց ցեղասպանության շրջանում կատարված իրադարձությունների մասին, որոնց կարող էր և տեղյակ չլինել հեղինակը, թեև հոդվածի անանունությունն այլ բան է հուշում:

Седа Гаспарян – Одержимость пантюркизмом и азербайджанская манипуляция

Ключевые слова – политический дискурс, манипуляция, манипулятивная техника и тактика, политическая манипуляция, геноцид армян

В настоящей статье представлены наши соображения по поводу одной электронной статьи, размещенной на сайте <Azvision.az>. Статья озаглавлена “Армянский так называемый геноцид” (“Armenian So-called Genocide”). Изначальная абсурдность заглавия заставила нас исследовать данную статью на наличие в ней манипулятивных тактик, которые неизбежно используются подобными авторами для достижения тех или иных политических целей. И действительно, оказалось, что в данной статье абсолютно все перевернуто с ног на голову. Умышленное передергивание фактов, приводящее к чудовищному искажению реальности, а также удивительная наглость анонимного автора, заставили нас аргументированно представить эмпирически обоснованные факты, которые полностью изобличают анонимного автора во лжи. В нашей статье приводятся и дополнительные факты о событиях произошедших во время геноцида армян в Османской империи, о которых автор, возможно, даже не был осведомлен, хотя и сама анонимность статьи, кажется, свидетельствует об обратном.

Seda Gasparyan – The Obsession with Pan-Turkism and the Azerbaijani Manipulation

Key Words – political discourse, manipulation, manipulative techniques and tactics, political manipulation, the Armenian Genocide

This paper presents our reflections of an article published in the Azerbaijani online news, the medium named <Azvision.az>. The article is entitled “Armenian So-called Genocide”. The absurdity of this formulation made us study the article from the perspective of the implementation of manipulative tactics usually and inevitably employed by authors of this category to achieve certain political ends. Indeed, it occurred, that everything is turned absolutely upside down in this article. The deliberate juggling of facts, leading to a monstrous distortion of reality, as well as the heinous arrogance of the anonymous author, prompted us to present reasonable and empirically sound facts which completely expose the anonymous author in his lie. Our article also provides additional facts about the events that happened during the Armenian Genocide, which the author may not have been aware of, although the very anonymity of the article suggests otherwise.

Ներկայացվել է 25.02. 2021

Գրախոսվել է 11.03.2021

Ընդունվել է տպագրության 14.04.2021